

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽԻԿԱՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Խիկարի զրույցը և Գիլգամեշի վեպը տառա-քարելական աշխարհի գեղարվեստական գրականության բացառիկ օրինակներ են, որ պահպանվել ու հասել են մեզ վաղեմի ժամանակներից:

Եթե Գիլգամեշի վեպը ստեղծվել է շատ վաղուց, բայց արդեն VII դարում (մ. թ. ա.), զրի է առնված Դուր Շարրուկինի ազյուսների վրա, և ձանաշում ենք այն VII դարի տեսքով, որը նրա նախատիպն է և միակ օրինակը, ապա Խիկարի զրույցը, կազմվելով թերեւ նույն շրջանում, շարունակել է իր ձամփան դրավոր և բանավոր փոխանցումներով մինչև մեր թվարկության XII—XIII դարերը, երբ հանդիպում ենք արդեն ձեռագրական օրինակների:

Այս երկար ձամփորդության ընթացքում զրույցը իր տեսքը կորցրել է, և նախնականը մթացնվել նոր շերտերի տակ:

Մեզ հայտնի չէ Խիկարի եթե ոչ առաջին, գոնե հնագույն մի բնագիր, որի պայմաններում հնարավոր է ավելի հեշտ լուծել նրա հետագա ազդեցությունների, նրա բանավոր զարգացման ուղիների, զուգահեռ թեմաների հարաբերակցման և ծավալման հարցերը, հարցեր, որ այնքան մեծ հետաքրքրություն են առաջացրել ընդհանուր բանասիրության մեջ Ասեմանից մինչև Ֆեթթեր և Նո (Nau): 1906 թվականին Էլեֆանտինի հրեական համայնքում գտնվեցին Խիկարի պատիրուս պատառիկներ<sup>1</sup>, որոնք բանասիրությանը քիչ բան կարող են տալ նրա հնագույն տեսքը և ծագումը որոշելու համար: Սակայն այս դեպքում նոր ձեռվ են մեկնվում, կամ, թերեւ, լուծվում են փոխազդեցության բաղմաթիվ հարցեր:

Պատիրուսների օգնությամբ հավաստելով Խիկարի վաղեմիությունը (V դար մ. թ. ա.), կարող ենք վստահորեն ասել, որ վաղուց նկատված Տովրիթի հիշատակությունները և Սուրբ գրքում զուգահեռ թեմաների հետքերը դալիս են Խիկարից (Տովրիթի գիրքը կազմվել է II դարում, մ. թ. ա.): Այդուհանով Խիկարի զրույցը պետք է դասվի Աստվածաշնչի հիմքում բնկած երրայտկան գրականության շարքը: Խիկարի կենսագրությունն անցել է եղովագուսին և

<sup>1</sup> Տե՛ս Aramäische Papyrus und Ostraka aus einer jüdischen Militärkolonie zu Elephantine, bearbeitet von Eduard Sachau, Լայպցիգ, 1911: Բնագիրը զերմաներեն թարգմանության հետ միասին, ինչպես նաև Arthur Ungnad, Aramäische Papyri aus Elephantine. Kleine Ausgabe unter Zugrundelegung von E. Sachau's Erstausgabe, Լայպցիգ, 1911, ճիշճան բնագիրը: Պատիրուսների բնագրի ռուսերեն թարգմանությունը Զախարի Գերմաներեն թարգմանությունից, օգտվելով Զախարիի և Անդրեյի բնագրերից և Նորդերենի դիտողություններից հրատարակել է Դուրնովն (ան Նիկոլայ Դուրնով, К истории повести об Акире, Отдельный оттиск из II выпуска IV тома Трудов Славянской комиссии императорского московского археологического общества, Մոսկվա, 1915):

ոչ ընդհակառակը, թերեւս նրանց ծառայել է մեկ ընդհանուր աղբյուր, համենայն դեպս Եղովառութ շի կարող առաջնություն զինարկել: Դեմոկրիտը օգտվել է Խիկարից, Լոկմանը կարող է կրած լինել ընդհանուր աղբեցություն: Բայց դրանով շի սահմանափակվում Խիկարի տարածման ոլորտը հնագույն և վաղ քրիստոնեական շրջանի գրականության մեջ: Այն ունի ավելի լայն շրջանակ-ներ:

Եղիպտոսում ստեղծվում էր մի գրականություն, որ վերագրում էին Թոթ աստծուն, իսկ Թոթը թարգմանարար նույնացվում էր Հերմեսի հետ: Հետագայում հույների մոտ Հերմեսը գիտակցվեց եղիպտական Թոթից անկախ, և նրա շուրջը ստեղծվեց առանձին գրականություն, մինչև մեր թվականության երրորդ դար: Հերմեսյան գրականությունը մեծ մասամբ կրոնա-փիլիսոփայական բնույթի է և օգտվում է խրատարանական, ուսուցողական ձևից: Հիմնականում Հերմեսը գիմում է իր որդուն և Ասկղեպիոս աշակերտին:

Հայ մատենագրության մեջ պահպանվել է Հերմեսյան երկերի մի օրինակ՝ «Հերմեայ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք», որի գիտական բնագիրը հրատարակել է Մանանդյանը<sup>2</sup>: Մատենագարանի № 2543 ձեռագրի 172ա թերթից սկսվում է մի բնագիր, որը նույնպես Հերմեսյան երկերի թվին է պատկանում<sup>3</sup>: «Դարձեալ այլ բանք Հերմեսի իմաստոյ, ասացեալ յաղագս տնօրէնութեան բանին աստուծոյ»:

Այստեղ սակայն Հերմեսը զիմում է, ոչ թե, ինչպես սովորաբար, Թոթին, կամ Ասկղեպիոսին, այլ բավական անսպասելի՝ նախանին. «Խօսեցու Հերմես իմաստասէրն ընդ որդոյ իւրում նախանայ: «Ծանիր որդեակ իմ նախան, զի անպատճառ իջանելոց է հուրն ահեղատես»: Կամ՝ «Որդեակ իմ նախան, ես յայտնեցի զքեզ զամենայն ծածուկ խորհուրդս, որ առ իմաստասէրս: Այս է զիրը որ ասի զիրք կենաց: Եւ արդ, զու որդեակ, բաց զաշս մտաց քոց և գանձեա ի գանձարանի սրափ քում, զոր այժմ աւանդեմ քեզ և պատճառն պատճառից պարունակեսցէ զքեզ...»<sup>4</sup>:

Այս բնագիրը թարգմանել է Կիոպրոսի Դավիթ եպիսկոպոսը, արարերենից. «թարգմանեալ յարաբացի գրոց ի ձեռն նուաստ և ագէտ եպիսկոպոսիս Դավիթի, ի խնդրոյ տէր Աւետիք նուիրակիս»<sup>5</sup>:

Բնագրի առնշությունը Խիկարի հետ ակնբախ է ոչ միայն արտահայտչական ձևի տեսակետից («Որդեակ իմ», «Հուր որդեակ»), որ ընդհանուր և տարրածված էր արևելյան հնագույն գրականության մեջ, այլև, որ զիմում է նախանին, Խիկարի քեռորդուն («Որդեակ իմ նախան»), ինչպես Խիկարը:

Այստեղ շփոթված է ոչ թե Հերմեսի աշակերտը, այլ նախանի ուսուցիչը, Հերմեսը գոխարինել է Խիկարին: Դա ոչ ուղղակի վկայությունն է այն բանի, որ Հերմեսյան գրականությունը տարածված էր նաև Խիկարի անվամբ, ավելի ձիշտ՝ ինչպես Թոթի, այնպես էլ Խիկարի շուրջը ստեղծվել են երկեր. որոնք հետո մտել են Հերմեսյան հեղինակությունների մեջ:

Որ խոսքը նույն Հերմեսի մասին է, և այստեղ ևս նա պատմական անձ չէ, այլ ընդհանրացված կերպար, հայտնի է հենց բնագրից: Նախ նա զիմում է

2 «Բանքեր Մատենագարանի» № 3, 1956, էջ 287—314:

3 Այս բնագիրը պարունակող ձեռագրի մասին մեղեկացրել է Ս. Լալաֆարյանը:

4 Մաշտոցյան մատենագարան, ձեռագրի՝ № 2543, էջ 172ա:

5 Անդ, էջ 172ա:

նախանին, որը ոչ մի առնչություն չէր կարող ունենալ որևէ Հերմեսի հետ և ապա՝ նույն բնագրի մեջ փորձ է արվում Հերմեսի համար մարդարեների շարքում տեղ որոշել:

«Ե (500) տարով յառաջ քան զԴափիթ, իմաստունս այս Հերմես և Ե (500) տարով յետոյ քան զՄովսէս»<sup>6</sup>:

Ալղափիսի փորձ արված է արարական Լոկմանի և Հունական եղավագոսի համար, իսկ Խիկարի մասին ինքը Սուրբ Պիբրն է հոգ տանում: Մարդարեացված իմաստուների այս անվավեր շարքի մեջ պետք է մտնի նաև Հերմեսը:

Հնագույն ժամանակների իմաստունները անվերջ կերպավորել են իրար:

Խիկարի հետ Հերմեսի առնչումը թերեւ գալիս է հետքիստոնեական շրջանից, մինչև III դար, երբ Հերմեսը բմբանվել է Թոթից անկախ: Այդ է թույլ տալիս մեզ մտածելու բնագրի բովանդակությունը, բայց գուցե և ենթագրել ավելի վաղ շրջան: Հետաքրքիր է, որ այնտեղ հիշատակություն կա Եղիպտոսի մտսին. «Եւ մտանէ յԵղիպտոս լոյսն ծածկեալ»: Դա իհարկե սոսկ վարկածային բնույթ ունի, բայց որ V դարում, մեր թվարկությունից առաջ Եղիպտոս է տարվել Խիկարի բնագիրը, անվիճելի է: Այդ են վկայում Էլեֆանտինյան պապիրուսները:

Այսպես, մեր նպատակն էր հպանցիկ հիշատակել Խիկարի աղղեցությունը ընդհանուր գրականության վրա, որն ոնի բավական լայն շրջագիծ՝ Սուրբ Պիբրից մինչև 1001 գիշերներ: Բայց և մեծ ու խորն է նրա աղղեցությունը բանավոր գրականության, տարբեր ժողովուրդների առածների, Հեքիաթների, զրույցների, առակների վրա:

Խիկարի զրույցը վաղեմի ժամանակներից եկող ընդհանուր գրականության տարածուն և կենսական թեմաներից մեկն է:

Տեսնենք թե նա ինչ ճանապարհ է անցել մեր մատենագրության մեջ:

Հարրիսը՝ Կոնիբերի հետ միասին Պղնձե քաղաքի ժողովածուից դուրս, Խիկարի բնագրի առաջին հրատարակողը, գրում է.

«Ինչ-որ տարօրինակ է, շնայտ զրբի Հայերի մոտ շատ տարածված բնույթին, Հայ գրականության մեջ ուրիշ հետք չի նկատվում»<sup>7</sup>:

Զրույցի բնույթն այնպես է, որ կարող է հեշտությամբ տեղայնացվել, փոփոխվել և ծովվել աղղային գրականությունների հետ: Հենց այդպես էլ եղել է դեռ շատ վաղուց: Մի տեղ ասված է, որ Խիկարը ծագումով հրեա էր, իսկ հին կտակարանում նա Տովրիթի եղբորորդին է՝ Արիկար (Աշուշահ): Հույները նրան սեփականել են՝ կապելով Եղավագոսի հետ, արաբները՝ համարել Հաղար ու մեկ գիշերների հերոսներից մեկը, Խիկարի սուսական խմբագիրը չի մոռացել շեշտելու, որ նա իր որդուն ոռւսերեն էր սովորեցնում:

Խիկարը տեղայնացել է և Հայ մատենագրության մեջ:

«Սարհաղոնի որդի Սենեքերիմի, թագավորի Ասորեստանի և Նինվեի, ՀՀ տարում»<sup>8</sup>: Այսպես է սկսվում տարբական բնագիրը, իսկ Հայկականը

6 Անդ, էջ 172ր:

7 The story of Ahikar from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic versions by F. C. Conybeare, J. Rendel Harris and Agnes Smith Lewis, *Lxxvii*, 1898, էջ LXXXI.

8 Անդ, էջ 58: Խրականում Սարհաղոնն է Սենեքերիմի որդին: Ալղափիսի ընթերցում տալիս է Շեռլինի Զախառուի № 336 ձեռագիրը: Տե՛ս F. Nau, Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien, Փարիզ, 1909, էջ 152:

բաց է թողնում Սենեքերիմի հոր Հիշտառակությունը. «Յամի Սենեքերիմ, արքայի Ասորեստանի և Նինվեի»<sup>9</sup>:

Այս փոքրիկ ընթերցումը կարեոր է: Բնագրում հիշվում է Արծվաց դաշտ, որտեղ պետք է նախանի խարդավանքով ներկայանար Խիկարը: Հայկական բնագրում այն դարձել է Արծրունեաց դաշտ: Սենեքերիմ, Արծրունեաց դաշտ:

Բայց զուգագիտությունները ավելի հեռու են զնում: Խորենացին հայտնում է, որ Արծրունիները Ասորեստանի Սենեքերիմ թագավորից են սերել. «Եւ են այս երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ՝ Արծրունիք և Գնունիք»<sup>10</sup>, իսկ նրանց տոհմական խորհրդանշանը եղել է արծիվը. «Եւ զԱրծրունիդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որը արծուիս առաջի նորա կրէին: Թողում զառասպելիացն բաջազանս, որ ի Հադամակերտին պատմին, մանկան նիրհելոյ տնձրե և արև հակառակեալ և հովանի թոշնոյ՝ պատանւոյն թալկացելոյ»<sup>11</sup>:

Այս ամենից հետո ոչինչ չէր մնում զրույցը կապելու Արծրունիների տան հետ:

Այդպես հայացվել են և այլ անուններ. Խիկարի կինը՝ Աշփեզանին դարձել է Արփեստան, որը գալիս է արփի բառից, Սենեքարը՝ Սնաքար, Արփկամը՝ Ակիկար:

Անունների այդպիսի տեղայնացումը բնորոշ է և Խիկարի այլ խմբագրությունների համար: Հուզների մոտ Սենեքերիմին փոխարինել է Նեկտաներոսը, որը հայտնի է և Ալեքսանդրի վարքից: Արարական գրականության մեջ Խիկարը տառագարձել է Հայկար, իսկ նարուսեմաքը՝ Արուսամիք, սլավոնական խրմբագրության մեջ Հերոսը Ակիրն է, իսկ իրոք Փարավոնի դեսպան Հանգես է գրալիս այնքան մեծ սարսափ տարածած մի պատմական դեմք՝ Բաթու խանի իշխան Ելտեղին:

Զրույցի գլխավոր հերոս Խիկարը, Հայերենում երկար և հետաքրքիր ճանապարհ է անցել:

Մի ձեռագրում, որտեղ խոսվում է աղանդավորների մասին, գրված է. «Այրն, զոր գեղջուկը Շնար կոշեն և էր Շունայր, զի խոտէր զամուսնութիւնն, զրազումս ձգեաց զկնի իւր, իսկ այրն զոր գեղջուկը Խիկար անուանեն և էր Խոկայր, զի իւրով իմաստութեամբ Հանապաղ խոկմամբ ամենեցուն տայր խրատս և առակօք կրթէր, պատուեցաւ ի սուրբ Հայրապետէս Զաքարիայ»<sup>12</sup>:

Աղբյուրը ճառնտիր է «Ի սուրբ Կարապետ, ի ՇԹ ( = 1060) թուականին զրուած, ունի եւթն ճառեր ի տնօրէնութիւնս տեառն և յիշտառակարան ինչ-ինչ զետքերու»<sup>13</sup>:

Այսպես. 1060 թվականին Հիշտառակվում է Խիկարի անունը, որն արգեն ենթարկված է ժողովրդական, կամ ավելի ճիշտ՝ զրական ստուգարանության: Այդ նշանակում է, որ նա մինչ այդ արդեն երկար ճանապարհ է անցել, և մթագնվել է նրա ինքնությունը: Նրա անձնավորությունը պատմականացնելու համար մնում էր մի վերջին բայլ՝ «Պատուեցաւ ի սուրբ Հայրապետէս Զաքարիայ»: Դա Զաքարիա Ա. Զագեցի կաթողիկոսն է, որը կրթուությամբ պար-

<sup>9</sup> Անդ, էջ 125:

<sup>10</sup> «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Արեգեան և Ս. Յարուբինեան, Թիֆլիս, 1913, էջ 111 (Բ-է):

<sup>11</sup> Անդ, էջ 111:

<sup>12</sup> Վահան Տեր-Մինասոյան, Անզիր զարուցիւն և առակը, Պոլիս, 1893, էջ 28:

<sup>13</sup> Անդ, էջ 29:

քարում էր Փոտ պատրիարքի դեմ և գործել է 855—876 թվականներին։ Այդպիսով, Խիկարը իր ապրել է IX դարում։

Խիկարի անվան հաջորդ հիշատակությունը մենք հանդիպում ենք Ներսես Շնորհալու մոտ, ածականաբար զործածված, իմաստուն առումով։

Ես ինչ կարդամ զիւրմէն քեզ ձառ,

Խելօքն ծով է ու խիկար<sup>14</sup>։

Այդպիսով, մեկ դար անց նա այնքան է տարածված և ընդհանրական, որ արդեն լեզվի մեջ զործածվում է հասարակ ձեռվ, իրեւ իմաստուն։

Հենց այդպես էլ ընդունել են Հայկագյան բառարանի հեղինակները, — Խիկար բառ ուամկական, իմաստուն, կամ իմաստակ։

XIV—XV դարերում, հայկանաբար Սարայի աղեցությամբ, մթաղնվում է Խիկարի ինքնությունը։

Մի ձեռադրում պատմվում է Խարայելի թագավոր Սողոմոնի և Սարայի վեճը, որը, լսելով Սողոմոնի իմաստության հոշակը, զալիս է Հարեշստանից նրան փորձելու։

Զրույցը պարականոն է և վերցված ոչ թե Աստվածաշնչից, որտեղ շատ համառոտ է հիշատակվում այդ մասին, այլ Թալմուդից։ Սակայն և Թալմուդում և Սուրբ գրքում հաղթում է Սողոմոնը. «Եւ ետես կինն զամենայն իմաստութիւն Սողոմոնի և ... յիմարեցաւ»<sup>15</sup>։

Հայկական օրինակում, որը վերագրվել է Խիկարին, վեճը շարունակում է հաղթում է ոչ թե Սողոմոնը, այլ Սարան՝ Խիկարը։ Սողոմոնն իր առջև զրբաժանում է Խիկարին. — Ո՞րն է աստծո արարութների մեջ զեղեցկագույնը։ — Գեղեցկագույնը ես եմ, կինը, — պատասխանում է նա։ Այդպես, Խիկարը նույնացվել է Սարայի հետ և լիովին անձնաւուել նրան։

Դրան ավելի է նպաստում թեման, որ բրիստոնյա միջավայրում հարադար կարող էր հնչել, քան բուն Խիկարի զրույցը, որտեղ նա որոշակիորեն բրիստոնյա չէ և պաշտում է կուռքեր կամ աստվածներ։

Սակայն Խիկարը՝ փոխակերպվելով Սարայի՝ վերանձնավորել է և հենց իրեն՝ Խիկարյան բուն զրույցի մեջ Սարայի պարականոնի աղեցությամբ, որը զիտվում է իրեւ Խիկարյան հեղինակություն, փոփոխություններ են մըտնում։ XIV—XV դարերի ընդօրինակություններից զուրս է նետված Խիկարի կին առնելու հանգամանքը («վաթսուն կին առի»), բազնում աղոթելը և աստվածների անոնչները։ Զրույցը այդպիսով համերաշխվում է Սարայի պարտկանոնին։

Անշուշտ դրանով պետք է բացատրել այն տարօրինակ երկույթը, որ Խիկարը կիրառվել է որպես կանացի անուն։ Այսպես, 1348 թվականին՝ տիրու՞ի

<sup>14</sup> «Տեսան ներսեսի Շնորհալու Հայոց կաթողիկոսի բանք շափառ», Վենետիկ, 1928, էջ 611.

<sup>15</sup> Գ. Բագ, Ժ.

Ստեփանոսի<sup>16</sup>, 1419՝ մայր Յոհանէսի<sup>17</sup>, 1455՝ մայր Վարդան քահանացի<sup>18</sup>, 1471՝ մայր Անթառամի<sup>19</sup> և այլն:

Կանանց համար այդպիսի անուններ գործածելը կենցաղում սովորական էր և ընդունված: Մենք հանդիպում ենք նուանա, ինձոր, խելոք կանացի անունների: Եթե կարող էր խելոք անուն լինել, որ հիշատակված է դեռևս 1336 թվականի գրչության մեջ<sup>20</sup>, ապա Խիկար, որ նույնպես խելոք է նշանակում կամ իմաստուն, բնական է, կարող էր գործածվել: Բայց այս դեպքում, կրկնում ենք, միայն պետք է ընդունել, որ մթազնված էր բուն Խիկարի անհատականությունը և նրա կապը զրուցի հետ. «Ես Խիկար դոդիր Մենքարիմայ արքալի. վաթսուն կին առի և վաթսուն ապարանս շինեցի և ես Խիկարս վաթսուն տարու եղայ և ոչ եղեւ ինձ որդի»<sup>21</sup>:

Հետազայում արդեն, XVI—XVII դարերում Խիկարը վերագտնում է իրեն: Այն գործածված է նախ՝ իրեն տղամարդու մականուն, ինչպես Մուրատ Խիկար (տաղասաց XVI դարու), Միրզաշան Խիկար (հիշատակված Արցախի մի արձանագրության մեջ)<sup>22</sup> և այլն, իսկ հետո՝ պարզապես իրեն տղամարդու անուն. «Եյս է Հանգիստ Խիկարին, Գրիգոր աւագ երիցու որդույն»<sup>23</sup>, «Դարձեալ լիշեցեր ... Խիկարն և որդիքն իւր Դաւիթն, Բաղդասարն ...»<sup>24</sup>, մինչև մեր օրերը:

Խիկարը նորից ուղղակի կապվում է իր զրուցի հետ և գիտակցվում իրեն Մենքարիմի քարտուղար, որը 60 կին ունի և աղօթում է աստվածներին:

Այդ շրջանում որոշ զրիչներ, նույնիսկ, ավելի լայն տեղեկություններ ունեն Խիկարի մասին: XVII—XVIII դարերի երկու ընդօրինակություններ տալիս են Հետաքրքիր ընթերցված: Խոսելով նարուսեմարի մասին, որին Մենքարիմը հանձնարարում է Խիկարին պատժել, ձեռագրերի մեջ ասված է. «Արուսմագ օռուսի լեզուաւ Անպուհիլ»<sup>25</sup>:

Այդ նշանակում է, որ ոռուսական բնագրում նարուսեմարին անվանել են Անպուհիլ (=Անցուլ): Դա ցույց է տալիս, որ զրիչները ծանոթ են եղեւ Խիկարի զրուցի սլավոնական խմբագրության հետ:

Խիկարը շարունակում է ենթարկվել Հետազա փոխակերպումների:

16 «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 368.

17 «ԺԾ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Հ. Ա. Երևան, 1955, էջ 224.

18 «Ցուցակ Հայերեն ձեռագրաց մատենադարանին Միսիթարեանց ի Վիեննա», կազմեց Յ. Յակովբոս Վ. Տաշիան, Վիեննա, 1895, էջ 425.

19 «ԺԾ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Հ. Բ. Երևան, 1958, էջ 317.

20 «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 285:

21 The story of Ahikar...

22 Մակար Բարխունչարյանց, Արցախ, Բաղու, 1895, էջ 406: Արձանագրությունն այսպիսաւ է. «Օրիստոս աստուած նշանս քարեխաւու Դաւիթաթին. Աստուածով ես Դաւիթս, ամուսին իմ մեծ իշխան Միրզաշան Խիկար, որդիքս իմ Տաւիթ բէկ Մէլիք պէկի գանդնեցին զիաշս փրկութիւն հոգու ի տանին Դեղամայ, դուստր Մէլիք Դուկասին թ. ԶՆԸ»:

23 Ի. Երգնելյանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, Վաղարշապատ, 1886, էջ 38:

24 «Ցուցակ Հայերեն ձեռագրերների թիֆլիդի ներսիսյան Հոգեոր դպրանոցի», կազմեց Առեփան Կանայանց, Թիֆլիդ, 1893, էջ 40:

25 Մաշտոցյան մատենագարան, ձեռագրի № № 3526 և 3493:

նրան վերագրված է մի բնագիր, որին մեծ նշանակություն են տվել Կոնֆրեռը և Հարրիսը, բայց որը սակայն անհարազատ է:

Այդ բնագիրը հարակցվել է ղրուցի տարրերակներից մեկին և սկսվում է այսպիս. «Հարցումն թագաւորաց որդուց և Պատասխանի Խիկարայ. Հուտայ և Բաղիայն հարցան ի Խիկարին և ասէ Խիկար ի Նաթան»<sup>26</sup>:

Այսպիս, թագավորի որդիները Հուտան և Բաղիան հարցնում են Խիկարին և Խիկարը պատասխանում է Նաթանին. Ինչպես տեսնում ենք, կապակցությունը բռնազրուիկ է: Հարցնում են թագավորի որդիները, իսկ նա պատասխանում է ոչ թե նրանց, այլ Նաթանին: Վերագրումն ավելի պարզ է՝ գունում մի հետաքրքրի օրինակով: Նույն բնագրի վերջում առաջարկված է նոր հարցում. «Հարցին ի Խիկար, խաւսին թէ երկիրս ինչ կայ քաղցր, պատասխանի ասէ՝ ամօթ երեսացն»<sup>27</sup> և այլն:

Նախադասության մեջ նկատվում է ինչ-որ անտեղի ձապաղումն: Ավելորդ է հնչում «խաւսին»-ը: Բայց դա վերագրուելն է մի այլ ձիշտ ընթերցվածի, որ պահպանված է № № 2669 և 6712 ձեռագրերի բնագրերում, ինչպես նաև Կոնֆրեռի օգտագործած մի ձեռագրում: Ոչ թե «Հարցին ի Խիկար, խաւսին», այլ «Հարցին ի Պիտարխաւսին (այն է՝ Պյութագորասին), թէ երկիրս ինչ կայ քաղցր»: Այդպես, «Պիտարխաւսին» բռնի ստուգարանվել է «Խիկար խաւսին» և ընտպիրը վերագրվել նրան:

Այդպիսի վերագրումների շատ օրինակներ կարելի է բերել, ինչպես Խիկարին, աշնոպես էլ ընդհակառակը, Խիկարից Սոզոմոնին, Սիրարին և այլն:

Դարերի ընթացքում Խիկարի շուրջը կուտակվում է այնքան մեծ զրականություն, որ նորից մթագնվում է նրա ինքնությունը և նրան վերաբերող բուն երկը՝ պրույզը դիտվում նույնիսկ անհարազատ:

Գարբիել Այվազյանը վավերական համարելով բազմաթիվ առակներ, առածներ, զրուցներ, պատումներ և այլն, կասկածելի է դոնում հենց միայն բուն զրուցը, իսկ Խիկարը վերջնականապես հանաշվում է իրեն աղգային գրող<sup>28</sup>:

«Եթե անուն մը կա անգիր դպրության մեց, անուն ամենուրեք հիշված ու հեղեղված, այս նշանագոր անունն է Խիկար: Որովհետեւ առածներ, առակներ ու առասպեկներ կավանդինն ու կզրուցվեն նրա անունով, ուստի միշտ կոշված է Խիկար իմաստուն»,— զրում է Վահան վարդապետ Տեր-Մինասյանը<sup>29</sup>:

Խիկարը հայ զրականության, հատկապես անգիր դպրության համար կատարում է նույն գերը, ինչ Վարդանը առակագրության մեջ: Նա հանդես է գալիս իրեն հավարական հեղինակ: Այսուղ արգեն զուտ աղգային բնույթ ունի և կապը ասորա-բարելական Ախիկարի հետ պայմանական է:

Ահա թէ ինչպիսի հանտպարհ է տնցել Խիկարը մեղանում, և եթե փորձենք քննել նրա բուն աղգեցության հետքերը՝ մատենագրության մեջ, ապա անհրաժեշտ կլիներ շոշափել հնգյակ խումբ հարցեր:

<sup>26</sup> The story of Ahikar.... էջ 140:

<sup>27</sup> Մաշտոցլան մատենադարան, ձեռագիր № 1978, էջ 28ա:

<sup>28</sup> Գ. Այվազյան, Հազար ու մեկ առակաւոր բանք աղգայինք և օտարք, Պոլիս, 1874, էջ 6—Ժե:

<sup>29</sup> Ա. Տեր-Մինասյան, Անգիր դպրութիւն և առակը, էջ 22:

1. Խիկարի օգտագործումը հայ մատենագիրների և պատմիչների կողմից՝ նրա զերբ խրատականքի, տռածանիի և առակագրության զարգացման մեջ, նրա թեմաների ծավալումը առանձին գրական սեռերում և այլն:

2. Խիկարի շուրջն ստեղծված հեղինակային և բանահյուսական գրականությունը:

3. Զրուցի տեղայնացումը և հագեցումը տղգային թեմաներով:

4. Զրուցի հասարակական բմբոնումը և կիրարկումը:

5. Զրուցի գրական մշակումները:

Մենք այստեղ շենք անզրադառնա այդ հարցերին, բայց կփորձենք քննել, թե ինչով է պայմանավորված Խիկարի արդարիստարածումը հայ և ընդհանուր գրականության մեջ:

Խիկարը, Ասորեստանի և Նինվեի տիրակալ Սենեքերիմ արքայի դպիրը, իր իմաստությամբ ու հանձարով մեծ փառքի և հարստության է հասել, բայց ժառանգ չունի: Նա դիմում է աստվածներին: Աստվածները նրան պատասխանում են, թե չի հրամայված քեզ զավակ ունենալու: Բայց եթե կամենում ես, վերցրու քո բրոշ որդուն՝ նաթանին և նա «Հատուցէ քեզ զնունդ քռ»:

Այդպես էլ անում է: Որդեգրում է, միամյու նաթանին և պահում յոթ տարի: Առվորեցնում է նրան իմաստություն և զգրություն և ներկայացնում թագավորին: Թագավորը գոհ է, հրամայում է, որ նաթանը նրան վոխարինի, իսկ ինքը հանգստյան գնա:

Խիկարը նրան տանում է տուն և առլիս իր նշանավոր խրատաները.

«Որդեակ, եթէ լսես բան ինչ ի գրան արքունի, մեռո և թագա զնա ի սրահում և մի ումեք ի վեր հանիցես:

Զկասլն կնքեալ մի արձակել և զարձակեալն մի կապեցես...»:

Բայց նաթանը տնաղնիվ է վճարում նրա երախտիքը:

Որոշելով, որ իր մորեզրայրը ծերացել է և «զառամեալ են միաբն իւրա ակում է վատնել նրա ունեցվածքը և անպատկոռ վարվել տան ծառաների ու աղախինների հետ:

Խիկարը բողոքում է արքային, որից գրգռված նաթանը զրում է Խիկարի անունից մի դավանանական նամակ և գցում թագավորի ծեռքը, որը հրամայում է իր զորավար Արուսմարին զլխատել նրան և հեռացնել «ըդզըլուխ զորա իրքե կանգունս Ճ (100)»:

Խիկարը կարողանում է համոզել Արուսմարին, և նրա փոխարին զլխատում են մի հանցագործ ծառայի Արիկամ անունով, իսկ ինքը թաքնվում է շետնափորի մեջ:

Անցնում է որոշ ժամանակ: Եղիպտոսի փարավոնն իմանալով, որ այլևս Խիկարը չկա, պահանջ է հղում Սենեքերիմ արքային: «Կիտութիւն լիցի քեզ, ոի կամիմ շինել ապարանս ընդ երկինքն և ընդ երկիրս ի մէջ ի կախ: Տես և առարեա առ իս ճարտար այր, որ շինէ և այլ զոր ինչ հարցանեմ տայ պատասխանի, ապայ թէ անփոյթ առնես, ես զամ և բառնամ զթագաւորութիւնդ և զերկիրդ քո աւերեցից»:

Նախարարները խորհուրդ են տալիս դիմելու նաթանին, որը շի կարողանում պատասխան տալ:

Թագավորը ափսոսանքով է հիշում Խիկարին: «Եթէ տայր որ զքեզ ինձ ևս տալի նմա զինչ և խնդրէր լինէն, անշափ զանձ ոսկոյ և արծաթոյ»:

Դրանից խրախուսված Արուսմարը հայտնում է, որ Խիկարը կենդանի է:

Այսուհետեւ պատմվում է, թե ինչպես Խիկարը գնում է Եղիպտոս, ինչպես Հնարամտությամբ վճռում է Երկնքի ու Երկրի միջև տաճար կառուցելու խընդիրը, ինչպես լուծում է փարավոնի հանելուկները և մեծ փառքով ու պարզեներով վերադառնում Ասորեստան:

Նա Հրաժարվում է թագավորից որնէ բան վերցնել և խնդրում է իր ձեռքը տալ նախանին. «Ինձ տացես զնաթան քեռորդին, որո ուսուցի, զի ոչ ուսաւ զառաշին ուսումն բարոք»:

Տանում է իր հետ, շղթայում և «գան Հարկանելով ի թիկուս և ի փոք նորա» տալիս Երկրորդ ուսումը, մինչև որ «ուսուցաւ նախան և պատառեցաւ»<sup>30</sup>՝

Ինչպես տեսնում ենք, զրույցը կարծես մի փոքրիկ խճանկար է, որտեղ ամեն ինչ կա. Ա՛ խրատ, Ա՛ առակ, Ա՛ պատմություն, Ա՛ Հերիաթ, Ա՛ Հանելուկ: Բազմազան տարրեր հավաքվել են մի սյուժեի շուրջը: Իսկ զործողությունը ծավալվում է Երկու հիմնական ձևերի մեջ՝ խրատք և հարց ու պատասխանիք:

Խրատքը հին և միջնադարյան գրականության մեջ տիրապետող ձև է. Այսօր այն չի հրապուրում, եթե հանդես է գալիս մերկ, բայց միջնադարյան ուսուցողական խոսքի լավագույն միջոցն էր, իսկ միջնադարյան ամբողջ գրականությունը հիմնականում ուսուցողական բնույթ ունի:

«Ճանաշել զիմաստութիւն և զխրատ», — ահա մեր զպրության հոր առաջին խոսքը ուղղված իր ժողովրդին և առաջին զիրք Հայերեն լեզվով: Այսպիս, Հայերեն թարգմանված առաջին երկը խրատներ են: Դա պատահական ընտրություն չէ, այդտեղ նախասիրություն կա, այն էլ զարի նախասիրությունը, իսկ Խիկարյան զրույցը խիստ համասեռ է: Սողոմոնի առակներին և Հայտնվել է Հայ գրականության մեջ թերեւ նույն շրջանում: V զարի Հայ պատմիչներին ծանոթ էին Խիկարին՝ թարգմանաբար, բնագրից, կամ միջնորդված աղբյուրներից:

Նկատենք, որ ձեռագրերում, մինչև «Պղնձե քաղաքի» մեջ մտնելը, Խիկարը հանախ ընդորինակվում էր և հետո էլ ընդորինակվել է Սողոմոնի, Սիրաբի խրատների և Մովսեսի օրենքների հետ մի ժողովածուում, իբրև Համասեռ նյութեր: Եվ զա բնական է: Խրատքը ոչ միայն նպատակ է զնում փոխանցել ավագ սերնդի իմացությունն ու կենսափորձը, այլև սերնդի մշակած վարագիծը, որոնք հաճախ ուժ են ստանում վերածվելով օրենքի:

Խիկարյան խրատները նույնիսկ ձգտում են զրան: Գրչություններում բնագիրն այսպիս է ներկայացվում.

«Խրատք Խիկարայ իմաստասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ, վասն շահի և օդտութեան», «...պարտ է ամենայն Հարց այսպիս խրատն զորդիս և վարդապետք դաշտերահալսն», «...պարտ է ամենացուն ի միտ առնուլ, պարտ է և արժան ուշիմ ի միտ զնել, զի զուռ է իմաստութեան և շահ է ամենայնի»:

Ստհմանվում է նույնիսկ պատիժ:

«Արդ, որ լսէ զխրատս զայս և առնէ, սիրելի առնէ զանձն աստուծոյ և մարդկան և երանեմ կենաց նոցա: Եւ որ լսէ և ոչ առնէ, մանաւանդ թէ Հակառակ ևս լինի և փոխանակ բարու շար ևս խորհի, եթէ որդի է թէ եղբար, թէ աշկերտ, թէ սիրելի կամ օտար, նու զառաշիկա զրեալդ ընդունի: Եւ թէ ոչ շապար եղուկ է նոցա»<sup>31</sup>:

30 Զբույցը բերված է բառ Կոնիքերի բնագրի (անգլ. The story of Ahikar, էջ 125—161):

31 Մաշտոցյան մատենադարան, ձեռագիր № 2961, էջ 51:

Պատիժը իհարկե բարոյական է: Սպառնում է նախանի ձակատագրով:

Նկատեցինք, որ իիկարը նախանին պատժում է ամենայն դաժանությամբ, որովհետև «անտես արար և հոսեաց զրանս, որպէս հողմ ընդդէմ փոշոյ»: Զնայած նախանի խնդրանքին ու զզումին, նա չի ներում նրան, այլ «Հարկաներ բիր» մինչև որ «ուսեցաւ նախան և պատառեցաւ»: Այդպես է բոլոր խմբագրություններում, բացի հունականից, բայց դա ուղղվել է որիէ բրիստոնյա խմբագրի՝ հավանարար հենց Պլատոնի ձեռքով:

«Որդեակ, որ ընդ ականջսն ոչ լսէ ընդ թիկունսն լսեցուցանեն», — ահա պատժի սահմանումը:

Իինելով հասարակական վարքի կանոններ, իիկարյան խրատականքը հարուստ է իր բովանդակությամբ: Այն արտահայտում է մարդու վերաբերմունքն ու փոխհարարերությունը կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ կնոջ, բարեկամի, ընկերոջ, ծնողների, ծերերի, դատավորների և իշխանավորների նկատմամբ, գինու, հաճույքների, հարստության և իշխանության վերաբերյալ և այլն: Եթէ հաճախ հակասական, որովհետև այնտեղ կան հասարակական գիտակցության տարբեր շերտեր, փոփոխված բարոյական բմբոնումներ:

«Որդեակ, սիրեա զկին քո, զի անձն քո է և կցորդ կենաց քոց և յոյժ աշխատանաւը սնուցանէ զորդին քո»:

«Որդեակ, կին, թուր, ձի ոչ են հաւատալի: Զշունն բոէ և զկին անզգամ՝ ոչ: Զի շունն ոչ մոռանայ զերախտիս մարդոյ, իսկ կին, թուր, ձի ոչ ձանաշեն զոէր իւրեանց»:

«Որդեակ, մի տար թոյլ ընկերին կոխել զոտս քո, զի մի համարձակիցի կոխել զպարանոց քո»:

«Որդեակ, խոնարհութիւն կալ զանձն քո և բնաւ մի հակառակիր, զի հակառակ խօսից բազում որոզայթ լինի»:

«Որդեակ, լաւ է առն եթէ ոք ի նեղութեան իցէ և կարէ բանիւ օդնել նմա, զի որպէս ի բերանոյ առեծու զերծուսցէ զնա»:

«Որդեակ, փախիր յերաշխաւորութենէ, թէ ոչ՝ բազում վիշտս կրես և ոչ զերծանիս, մինչև հատուսցես»:

Խրատներն ունեն ձանաշողական մեծ արժեք և կենսափործի խտացում են:

«Որդեակ, մի լինիր կարի քաղցր, զի մի կլանիցին զքեզ և մի կարի զառն, զի մի թքանիցին, այլ եղիցիս հեղ և հանդարա ի զործս զնացից քոց»:

«Որդեակ, մեծատան որդին օծ կերաւ, ասէին դեղ է նմա, աղքատին որդին կերաւ, ասեն առ սովուն կերաւ»:

Տարբեր ժամանակներում մարդիկ զտել են այնտեղ իրենց հետաքրրող հարցերի պատասխանները և միշտ վերախմբագրել, արտահայտելով սեփական տրամադրություն:

Օտար բոլոր խմբագրություններում խրատներից մեկն այսպիս է. «Որդեակ, կերա զառնիճ և լեղի և ոչ էր դառն քան զաղքատութիւն», իսկ հայկական խմբագրության մեջ հնչում է հայերեն՝ «և ոչ էր դառն քան զաղքատութիւն և զպանդխտութիւն»:

Մի այլ տարբերակում խորանալով տրամադրությունը՝ ստեղծվել է նոր խրատ. «Որդեակ, կերայ տղրուկ և արրի ջուր հատեալ և շէր դառն, քան զօտարութիւն»:

«Որդեակ, եղեր ինձ որպէս այծն, որ ուտէր զտորունն, և ասէ տորունն զայծն, Զի՞ ուտես զիս, ո՞չ զիտես թէ ինեւ շիկեն զմորթդ: Ասէ այծն. ես ի

կենդանութեան իմում ուսեմ զքեզ և ի մահուան իմում թող խլեն զտակ քո և շիկեն զմորթ իմ»։ Այս առակը գրչի մոտ ինչ-որ մտքեր է արթնացնում և ձայնարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտել. «Ոհ. ո՛հ, ի դառն ժամանակիս»։

Խիկարի խրատները ավելի են տարածված հայկական ձեռագրերում, քանի թե Սիրաբի և Սպամոնի, շնայած նրանք օգտվում են Աստվածաշնչի հեղինակությունից. Սողոմոնի և Սիրաբի խրատները միաբնույթ են և հեղինակային, իսկ Խիկարի խրատները ունեն ժողովրդական կենսալիր ոճ և ուղեկցվում են Հետաքրքիր պատմությամբ, Սիրաբի և Սողոմոնի խրատները ձեռագրերով անցել են զրեթե անփոփոխ, որովհետև ունեն կանոնիկ նշանակություն։ Պետք էր անաղարտ պահել Սուրբ գրքի խոսքը։ Խիկարի համար այդպիսի սահմանափակում չկա։ Ընդորինակող զրիշները ազատ են վարվել և կատարել բազմաթիվ հավելագրումներ՝ ու նորմուծություններ՝ տարբեր ժամանակներում։ Այդպիսով, զրուցի խրատականքը հենքի դեր է կատարել դարերի ընթացքում և դարձել մի տեսակ բարքերի ու վարքագծի տարեցույց։

Խիկարի հայկական խմբագրությունը ունի յոթ տարբերակ, որից երկրորդը և չորրորդը՝ ավելի շատ թվով խրատներ ունեն։ Երկրորդ տարբերակի մեջ անհարազատ են մոտ 77 խրատ, որոնք կազմում են մի ամբողջական բնագիր և ձուլել են զրուցին այնպես հաջող ու բնական, որ միշտ դիտվել են իբրև բնագրի մի մասը։

Այդ խմբի մեջ կան հետաքրքիր խրատներ, որոնք արժեք ունեն ոչ միայն իրենց բնույթով, այլև իրեն ժամանակի ոգու և տրամադրությունների արտահայտություն, որտեղ քաղաքական գիտակցություն է զրակորվում։

«Որդեակ, այր անմիտ կարծէ ի սրտի իւրում, թէ յորժամ տեսանեմ ի թագաւորաց և յիշխանաց յորոգայթս նեղութեան, շնորհս ինչ յաւելու լինքն և ոչ իմանայ, թէ թշնամիք նոցա նեղեն զաշխարհս և ինքն այլ ի կորուստ մտանի ընդ նոսա»։

Նույն խրատը մի այլ շարքի մեջ ուղղակի փոխել է իր նախնական տեսքը.

«Որդեակ, այր անմիտ կարծէ ի միտս իւր, թէ յորժամ մտանէ ի տուն թագաւորաց ի փառս իւր աւելու և ոչ իմանայ, թէ դիւրաւ ըմբռնի ի մահ»։

Եթե այս հավելագրումը ավելի հեղինակային և զրական ծագում ունի, ապա չորրորդ տարբերակին հարակցվել են զուտ ժողովրդական խրատներ։

1. «Որդեակ, խօսքն զինչ ճոճար է, ի սատաֆի մէջն դիր և յամէն տեղ մի ցրուեր»։

2. «Որդեակ, լեզուն հարցաւ զլխոյն, թէ հալտ ինչ է, ասաց, թէ քանի լուռ կաս, նա ես խիստ հանդիստ եմ»։

3. «Որդեակ, զոտքդ ի կամ դնես ի փշոյ պատրաստ կացիր, ըզձեռքդ ի ծակըն տանիս, ի յօձու պատրաստ կացիր»։

4. «Որդեակ, ով մոտ ի լուսին նստի՝ երեսն նման լուսոյ պայծառանայ և ով մոտ ի սև պտուկն նստի՝ նորա նման լինենայ»։

5. «Որդեակ, եթէ ասէ ոսկին թէ ես Հնդիստանի եմ, ինչ շահ է իւր ասելն, վասն զի մահաքն կու ճանաշէ զինքն»<sup>32</sup>։

Զրուցի երկրորդ մասը հարց ու պատասխանիք է, որը նույնպես ուսուցողական բնույթ ունի և ավելի ճանաշողական արժեք։ Հին աշխարհում մարդու

<sup>32</sup> Մաշտոցյան մատենադարան, ձեռագիր № 2018, էջ 270ր—271ա:

քիչ բան գիտեր բնության և աշխարհի մասին և պակասը լրացնում էր յուրովին՝ նա երեխայի պես բաց էր արել աշքերը և նայում էր շուրջը զարմացած, նու հարցնում էր, ինչո՞ւ և պատասխանում կամ ձեռք բերված փորձով, կամ սրամիտ հնարանքով, կամ երեակայությամբ, կամ գերբնական ճանապարհով։ Հերիաթների մեջ ողողվել է այս թեման, թագավորները իրար հետ մրցում են հանելուկներով, վիշտապները բարդ առաջադրանքներ են տալիս հերոսներին, հանելուկներ կամ դժվար խնդիրներ են լուծում, որ հասնեն տենչած գեղեցկուհուն և այլն։

Փարավոնի բոլոր հարցերը Խիկարը լուծում է բացառապես իմաստությամբ։ Նա այդպես է հաղթում թշնամուն։

Փարավոնն առաջադրում է տոմարի, երկնքում տաճար կառուցելու, ավարից պարան մանելու, զեռ շլսված խոսք ասելու և ուրիշ խնդիրներ։

Այդ ամենը ինքնին հետաքրքիր են և հյուավում են այնպիսի կապակցությամբ, որ շատ հեշտ ամեն մի խնդիր կարող է ինքնակա արժեք ունենալ։ Ոչինչ չի տուժի, եթե դրանց վրա ավելացվեն նոր խնդիրներ, կամ որոշ խնդիրներ դուրս ընկնեն, ծավալվեն գեղարվեստական անկախ ձեւերի մեջ և այլն։

Այստեղից էլ առաջանում է փոխազգեցության լայն հնարավորություն։ Այդ խնդիրները զուգահեռաբար կան մեր և ուրիշ ժողովուրդների զրուցներում, հերիաթներում և այլն։

Այսպես։ Տոմարի խնդիրը Խիկարն ասում է, որ ասորաց հորթարածներն անգամ գիտեն։ Այդ խնդիրը կա և «Պատմութիւն աղջկանն ու մանկան» զրուցի մեջ։ Երկրորդ խնդիրը կապված է մարդու թոշելու դադափարի հետ։ Ասորարելական աղյուսների վրա պատմվում է Էտանի մասին, որը թոշում է արծիվի հետ։ Այդպես են անում Խիկարը և Եղովակոսը։ Հույն առասպելում թոշում են Գիդալն ու Իկարը։

Մարդու այդ երազանքը հետաքրքիր ճանապարհ է անցել Էտանի զրուցը ավելի հին է և շատ անքնական է հնչում։ Նա ինքն է նստում արծիվի վրա, որը սովորական արծիվ չէ, այլ գիտի մարդկային լեզուն։ Խիկարի մոտ զրվագը հավանաբար անցել է Էտանից, բայց ստացել իրական գեեր։ Թոշում է ոչ թե ինքը, այլ վարժեցված երեխաներ, որոնց զնում է կողովի մեջ։ Դա նույնությամբ անցել է Եղովակոսին, իսկ Իկարը ինքն է թեր սարքում և փորձում թոշել, — սա արդեն նոր բան է և մարդու թոփշի առաջին փորձը, որը նույնպես ծնվել է նախորդ երազներից։ Բայց այստեղ դիտենք մի հարց, — արդյո՞ք հիկարը որևէ առնչություն չի կարող ունենալ իկարի հետ, թե՞ անունների պատահական զուգահնչումություն է։

Խիստ տարածված են և մյուս խնդիրները. ավազից պարան մանել, այնպիսի բան ասել, որ ոչ ոք չի իմացել։ Հիշենք, որ այս վերջին թեմայի վրա է կառուցել իր հերիաթներից մեկը Հ. Թումանյանը և այլն։ Սրանք թեմաներ են, որոնք անվերջ հետաքրքել են մարդկանց։

Զրուցի երրորդ մասը նորից խրատներ են, բայց առակավոր բնույթի, ուղղակի առակներ, որոնք ևս, պարզ է, կարող էին և՛ ընդարձակվել և՛ պոկվել հիկարի զրուցից ու ստանալ անկախ բնույթ։ Աղվեսազրում ու վարդանի ժողովածուների մեջ ցրված են այդ առակներից, բայց, պետք է նկատել, ոչ այնքան շատ։ Այդ նրանից է, որ Խիկարի առակավոր խրատները պտտվում են մի հարցի շուրջը, ունեն պատժիշտ բնույթ, թեմատիկ մեծ կապ իրար հետ, ուստի արահելը դժվար է։

Խիկարի գրույցը հրապուրիշ է և դել անցած դարերի համար ոչ միայն այն պատճառով, որ արտահայտվել է զեղարվեստական ձևուն ձեերի մեջ, — այլև որ արտահայտել է կարեոր մի թեմա՝ երախտադիտությունը և մի գաղափար՝ ուղղագիծ ժառանգության խնդիրը:

Խիկարի գրույցը շնայած իր բարզմանական բնույթին դարձել է, ինչպես շատ ժողովուրդների, այնպես էլ մեր գրականության անկապտելի մասը, և նրա ուսումնասիրությունը խիստ կարեոր է ոչ միայն միջազգային, այլև բուն Հայ գրականության պատմության համար:

Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## МЕСТО И РОЛЬ АХИКАРА В АРМЯНСКОЙ СЛОВЕСНОСТИ

### Р е з ю м е

«Наставления и премудрость Ахикара» («Повесть об Акире премудром») связана с тремя великими памятниками: Библией, Эзопом и «Тысяча и одной ночью». Сохранившись на разных языках,—ассирийском, арабском, греческом, армянском, славянском, эфиопском и т. д.—«Наставления» стали неразрывной частью литературы этих народов.

Повесть Ахикара получила в армянской литературе широкое распространение и признание. Под именем Ахикара слагались повести, пословицы, назидания, притчи, забавные истории и т. д., носящие чисто национальный характер. В древнеармянской литературе повесть и имя Ахикара пережили интересные этапы развития. В древнейший период Ахикар признавался чужеземным автором, впоследствии имя Ахикар стало нарицательным и употреблялось в смысле «мудрец», как личное имя, и, наконец, в XVI—XVII веках вновь приобрело свой первоначальный смысл. В статье показаны и объяснены эти изменения.

Богаты и разнообразны в древнеармянской литературе редакции и варианты повести Ахикара. До настоящего времени науке были известны две армянские редакции, а повесть имеет шесть редакций, которые значительно расходятся между собой. Изучение этих вариантов может дать значительный материал для разрешения важных вопросов, связанных с первоначальным текстом повести Ахикара.

А. А. MARTIROSSIAN

## DE L'IMPORTANCE D'AKHIKAR DANS LA LITTERATURE ARMENIENNE

La légende d'Akhikar, œuvre marquante de la littérature mondiale, se rattache à trois grands monuments littéraires: les Fables d'Esope, la Bible et les Contes des Mille et une nuits. Elle nous est parvenue en

assyrien, en arabe, en grec (partiellement), en arménien, en slavon, en éthiopien, etc. On ne saurait la détacher du patrimoine littéraire des peuples qui l'ont adoptée.

Cette légende fut largement répandue dans la littérature arménienne. Nombreuses sont les légendes, fables, sentences, anecdotes strictement nationales se prévalant du nom d'Akhikar.

La légende et le nom d'Akhikar subirent en Arménie et dans la littérature arménienne une évolution particulière. A l'origine, Akhikar ne rappelait qu'un auteur étranger, il revêtit bientôt un caractère national, son nom prenant la valeur d'un nom commun devint synonyme de sage. Il servit aussi de nom propre et ce n'est qu'aux XVI<sup>e</sup> – XVII<sup>e</sup> siècles qu'on le rétablit dans sa valeur initiale. Cette évolution nous est ici présentée et commentée,

Les versions et les variantes arméniennes du texte même de la légende d'Akhikar sont des plus riches et des plus nombreuses.

La littérature arménienne semblait ne posséder que deux variantes. Elles sont aujourd'hui au nombre de sept, très différentes les unes des autres. Leur étude contribuera à éclaircir certaines questions très importantes du point de vue de la recherche du texte original.